



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ



Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-

39, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 9
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետի 10-րդ, 12-րդ ենթակետերը.

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ փորձարարական կարգով ռեզիդենտուրայի ներդրման առաջարկին և հաստատել «Մանկաբուժություն» մասնագիտությամբ հետբուհական մասնագիտական կրթական ծրագիրը (կցվում է) (23-06-09-01).
2. Հաստատել «Ակադեմիական անձնակազմի մասին» կանոնակարգի լրացումները և փոփոխությունները՝ (կցվում է) (23-06-09-02).
3. Հաստատել «Անվանական կրթաթոշակների մասին» կանոնակարգի լրացումները և փոփոխությունները՝ (կցվում է) (23-06-09-03).
4. Հաստատել «Ուսման վճարների փոխհատուցման մասին» կանոնակարգի լրացումները և փոփոխությունները՝ նոր խմբագրությամբ (23-06-09-04).
5. Հաստատել «Ուսման վճարի չափերի մասին» կանոնակարգի լրացումները և փոփոխությունները (կցվում է) (23-06-09-05).
6. Հաշվի առնելով հանրային առողջության և առողջապահության կազմակերպման, արյունաբանության և մանկական ուռուցքաբանության, ընդհանուր ուռուցքաբանության կլինիկական լաբորատոր ախտորոշման, վերականգնողական և սպորտային բժշկության



ամբիոնների վարիչների և պրոֆեսորների ընտրության հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը, հաստատել ընտրությունների հետևյալ արդյունքները՝

1) որպես հանրային առողջության և առողջապահության կազմակերպման ամբիոնի վարիչ ընտրված համարել Արտաշես Էդուարդի Թադևոսյանին (23-06-09-06).

2) որպես արյունաբանության և մանկական ուռուցքաբանության ամբիոնի վարիչ ընտրված համարել Գևորգ Նաիրիի Թամամյանին (23-06-09-07).

3) որպես կլինիկական լաբորատոր ախտորոշման ամբիոնի վարիչ ընտրված համարել Զարուհի Հուսիկի Գևորգյանին (23-06-09-08).

4) որպես վերականգնողական և սպորտային բժշկության ամբիոնի վարիչ ընտրված համարել Նունե Գևորգի Տեր-Մարգարյանին (23-06-09-09).

5) որպես հանրային առողջության և առողջապահության կազմակերպման ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Անահիտ Կառլենի Հայրապետյանին (23-06-09-10).

6) որպես հանրային առողջության և առողջապահության կազմակերպման ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Մարինե Արարատի Մարդիյանին (23-06-09-11).


7) որպես ընդհանուր ուռուցքաբանության ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Գագիկ Արամի Զիլավյանին (23-06-09-12).

8) որպես ընդհանուր ուռուցքաբանության ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Էվելինա Ռաֆիկի Բախշինյանին (23-06-09-13).

7. Ընդունել ի գիտություն Հայաստանի 6-րդ միջազգային բժշկական համագումարի կազմկոմիտեի պատվավոր նախագահ Ա.Բաբլոյանի առաջարկը ԵՊԲՀ ռեկտոր Ա.Մուրադյանին հաջորդ՝ 7-րդ համագումարի կազմկոմիտեի նախագահությունը ստանձնելու վերաբերյալ (23-06-09-14).

8. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝



Բ. Գ. Դ., ՊՐՈՖ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ



ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ. Գ. Դ., ՊՐՈՖ. Տ. Գ. ԱՎԱԳՅԱՆ